

ԷՐՏՈՂԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ, ՈՐԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՍԼԱՄԱԿԱՆ Է

ԱՆԳԱՐԱ, 4 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրք ղեկավար Ռեճեպ Թայիպ Էրտողան, որուն կուսակցութիւնը առաջնակարգ դիրքեր կը գրան ընտրութիւններէն առաջ տեղի ունեցող հարցախոյններուն մէջ, յայտարարեց, որ իր կուսակցութիւնը իսլամական չէ, հակառակ անոր իսլամական արմատներուն:

Էրտողանի Արդարութիւն եւ Բարգաւաճում կուսակցութիւնը, որ իսլամական արգիլում կուսակցութեան մը չափաւորական թեւէն կազմուեցաւ անցեալ տարի, կը վայելէ հանրութեան պօրակցութիւնը, օգտուն լըժ քաղաքական գլխաւոր կուսակցութիւններու երկփեղկուած իրավիճակէն:

Էրտողան շեշտեց, որ իր կուսակցութիւնը իսլամական չէ: Թուրքիոյ ընտրութիւնները պիտի կայանան 3 Նոյեմբերին:

ՊԱՍՏՈՒՆԻ ՄԷՋ ԲԱՆԱԿԻՆ
ԵՒ ՊԱՆԵՍՏԻՆՅՈՒ ԶԻՆԵԱԼՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՌՈՒՄՆԵՐ

ԲԱՆԱԿԸ ԵՐՁ ԱՓԱԿԵՑ ԳԱՂԹԱԿԱՅԱՆԸ



Բախումներ գաղթականացի մուտքին

Հիւսիսային Բանակի եւ Ժալիլ (Ռեփլը) գաղթականացի պաղեստինցի զինեալներու միջեւ երէկ առաւօտեան բախումի մը նահատակուեցաւ բանակային մը եւ սպանուեցան երկու պաղեստինցիներ:

Բանակէն ջոկատ մը երէկ առաւօտեան ժամը 6:00ին խուզարկեց վերջերս Պաղեստին մէջ մեռած Սապրի Պաննայի (Ապու Նիտալ) «Ֆաթհ Յեղափոխական խորհուրդ» կազմակերպչու թեան Պալազէի ժալիլ գաղթականացի գրասենեակը, գրաւելով զինքն եւ զինամթերքը: Այս գործողութեան ընթացքին սահմանափակ բախում մը պատճառեց չորս վիրաւոր:

Գաղթականացի բնակիչներ գաղթականացի մայր ճամբան փակեցին քարերով եւ այրող անիւններով, իսկ երբ բանակայինները փորձեցին ճամբան բանալ, անոնք թիրախ դարձան պաղեստինցի զինեալներու կրակոցներու նահատակուեցաւ բանակային մը: Բախումին ընթացքին սպանուեցան երեք պաղեստինցիներ:

ՊԱՍՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՈՎ

«ԷՄ. ԹԻ. ՎԻ.» ՎԵՐՁՆԱԿԱՆԱՊԷՍ ՓԱԿՈՒԱԾ Է

«Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանը դատական աննախընթաց որոշումով վերջնականապէս փակուեցաւ երէկ: Պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի կայանները այս վճիռին հակադէպի անժամապար դարձան պաղեստինցի իրենց սփռումները, իբրեւ պօրակցութեան արտայայտութիւն փակուած կայանին հանդէպ, իսկ խմբագիրներու սենտիքային նախագահ Մըլիքի Քարամ լրատուական միջոցներու ներկայացուցիչներու ժողովին ետք յայտարարեց անոնց ընդդիմութիւնն ու դատաւարտումը եւ պահանջեց վերատեսութեան ենթարկել վճիռը: «Էմ. Թի. Վի.» փակումը նաեւ առիթ հան-

ցիներ եւ վիրաւորուեցան 15 ուրիշներ:

Պալազէի ոստիկանատան մէջ շրջանի բանակային եւ ոստիկանութեան հրամանատարները ժողով մը գումարեցին գաղթականացի ժողովրդային յանձնախումբի անդամներուն եւ Պալազէի մզկիթներու իմամ-



ներուն հետ, մեղմացնելու համար լարուածութիւնը:

Գաղթականացի ժողովրդային յանձնախումբը հաղորդագրութեամբ մը դատաւարտեց թուրք կողմերուն համար վնասակար այս դէպքը:

ԲԱՆԱԿԻ ՇՐՈՒՄԱՆԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՄԱՆ ԿՈՒՐՈՒՄԻՆԸ

Հիւսիսային Բանակի տեղեկատուութեան հարցերու վարչութիւնը երէկ կէսօրէ ետք հրատարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ յայտնեց,

թէ բանակէն զօրամաս մը երէկ Պալազէի մէջ պաղեստինեան գաղթականացի ժողովրդային յանձնախումբը հաղորդագրութեամբ մը դատաւարտեց թուրք կողմերուն համար վնասակար այս դէպքը:

Շար.՝ Էջ 10

ԻՍՐԱՅԷԼ ԿԱԶԱ ԱՐՏԱՔՍԵՑ ԵՐԿՈՒ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐ



Կազա արտաքսուած պաղեստինցիները

Իսրայէլ երէկ Ասրայորդանէն կազա արտաքսեց պաղեստինցի ծայրայեղականի մը քոյրն ու եղբայրը, որոնք ամբաստանուած են անձնասպանական գործողութեան մը պատրաստութեան օժանդակելու յանցանքով:

Քիֆաճ եւ Ինթիսար Աժուրիի պաշտպան փաստաբանը յայտնեց, որ երկու արտաքսուելները կազա փոխադրուեցան իսրայէլեան զինուորական ինքնաշարժով մը: Փաստաբանը աւելցուց, որ Քիֆաճի եւ Ինթիսարի ընկերակցող զինուորները հրահանգած են, որ ամառի ու անընակ վայրի մը մէջ դուրս գան ինքնաշարժէն:

Իսրայէլեան բանակին կողմէ հրատարակուած յայտարարութիւն մը կը նշէր, որ Ինթիսար եւ Քիֆաճ Աժուրի փոխադրուած են կազա: Իսրայէլի գերագոյն ատենադէրեքթի օր կանաչ լոյս տուած էր արտաքսման վճիռին, որ առաջինն է Սեպտեմբեր 2000էն ի վեր: Անոնց եղբայրը՝ Ալի, որ ամբաստանուած էր անձնասպանական գործողութիւն մը ծրագրած ըլլալու յանցանքով, իսրայէլեան ուժերու կողմէ սպանուեցաւ Օգոստոսին: Բանակին յայտարարութիւնը կը նշէր նաեւ, թէ երկու արտաքսուելներուն տրուած է հազարական շեքէլ (210 տոլար), ջուր եւ ուտեստեղէն:

Արտաքսման որոշումն ու անոր գործողութիւնը խիստ ոճով դատաւարտուեցան Էմըրաթի Ինթըրնէ-շընքի կողմէ: Մարդկային իրաւանց պաշտպան միջազգային կազմակերպութիւնը պատեհաբար ոճի կը նկատէ այսպիսի որոշումները:

Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատար Սաէպ Ուրաբթի եւս դատաւարտեց արարքը, իբրեւ պատեհաբար ոճի, զիտեղ տարով, որ Իսրայէլ «անուառի օրէնք» կը կիրարկէ: Իսկ Համաս իսլամական շարժումը երգուեց հակադարձել թափ տարով Իսրայէլի դէմ գործողութիւններուն:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Շաւքի Արաֆատ իր կարգին «մարդկութեան դէմ իբրեւ ոճի» դատաւարտեց արտաքսումը: Ան աւելցուց, որ այսպիսի արարք կը բռնաբարէ մարդկային իրաւունքն ու միջազգային օրէնքը: Արաֆատ կը խօսէր Դանիոյ արտաքին գործոց նախարար Փէր Շիլի Մէօլըրի հետ ունեցած տեսակցութեան աւարտին:

ՃԱՐՈՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԸՆԴՆՈՒՄՈՒՄ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ ԸՅԵ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն յայտնեց, որ հաւանութիւն տուած է հանդիպում մը ունենալու Շար.՝ Էջ 10

ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՆ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԻՐԱՔԻ ԴԷՄ ԱՄԵՐԻԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

ԳԱՀԻՐԷ, 4 (ՌՈՅԹԸՐԸ).- Արաբական Լիկայի արտաքին գործոց նախարարները երկօրեայ հանդիպումի մը ձեռնարկեցին Չորեքշաբթի օր, քննարկելու համար Իրաքի նախագահ Սադամ Հիւսէյնը տապալելու ամերիկեան սպառնալիքները:

Լիկայի անդամ քսաներկու երկիրներէն քսան նախարարներ կը մասնակցին վեցամսեայ գործընթացը գումարաւոր հերթական ժողովին, որուն առաջին անգամ ըլլալով կը մասնակցին արաբ-ամերիկացի ներկայացուցիչները:

Իրաքի արտաքին գործոց նախարար Նաթի Սապրի ըսաւ, որ արաբական բոլոր երկիրները կը մերժեն ամերիկեան կեցուածքը եւ Պաղեստինի դէմ ուղղուած ամբաստանութիւնները:

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա՝ բացման նիստին արտասանած խօսքին մէջ, ըսաւ որ Իրաքի եւ ՄԱԿի միջեւ բանակցութիւնները պէտք է քաջալերուին, կարենալ լուծելու համար բոլոր հարցերը: Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմէտ Մահմէդ իր կարգին ըսաւ, որ Իրաք կ'ընդունի զինքի քննիչներուն վերադարձը, սակայն երաշխիքներ կը պահանջէ անոնց տանելիք աշխատանքին բնոյթին ու տեւողութեան մասին:

ՊՊՀԻ ՄԵՎ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ՊԱՔՈՒ ԿԸ ՄԵԿՆԻ

Մասնակցելու համար ՊՊՀի անդամ երկիրներու ներքին գործոց նախարարներու ընթացիկ հանդիպումին, այսօր Արաբիան պիտի մեկնի Հայաստանի ներքին գործոց նախարարութեան պատուիրակութիւն մը, զիստորութեամբ ներքին գործոց նախարար Հայկ Յարութիւնեանի:

Արաբիանակա «Ձերբայ» թերթը այս առնչութեամբ հաղորդեց, որ այսպէս կոչուած «Ղարաբաղի Ապատագրութեան Կոմիտէ» ղեկավարները մտադիր են բողոքի հաւաքներ կազմակերպել Սեպտեմբեր 6ին եւ 7ին կայանալիք հանդիպումներուն ընթացքին:

«Ղարաբաղի Ապատագրութեան Կոմիտէ» ղեկավար խորհուրդը արտակարգ նիստ մը գումարած է հայկական պատուիրակութեան Արաբիան մուտքը արգիլելու համար միջոցներու ձեռնարկելու նպատակով: «Այնքան ատեն, որ Հայաստան չէ հեռացած արաբիանակա հողերէ եւ չի ձանձնար Արաբիանի տարածքային ամբողջականութիւնը, ոչ ոք իրաւունք ունի Հայաստանէն մուտք գործել Արաբիան», յայտարարած է նշեալ կազմակերպութեան նախագահ Աբիֆ Նապի: Ան պահանջելով արգիլել հայ պատուիրակներու Արաբիան մուտքը, սպաննացած է բողոքի շարժում մը կազմակերպել հանդիպումի կեդրոնին առջեւ:

ՄՈՍԿՈՒՅԻ ՄԵՋ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղար, պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան երէկ վերադարձաւ Մոսկուա կատարած երկօրեայ պաշտօնական այցելութենէն, ուր մեկնած էր մասնակցելու հայ-ռուսական տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի նիստին, որուն հայկական կողմի նախագահն է: Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան լրատուութեան ու քարտուղարութեան վարչութիւնը հաղորդեց, որ Սերժ Սարգսեան Մոսկուայի մէջ հանդիպումներ ունեցած է նշեալ յանձնաժողովի ռուսական կողմի նախագահ Իլիա Բլեպանովի հետ: Սարգսեան նաեւ հանդիպում ունեցած է Ռուսիոյ բանակի սպայակոյտի պետ Կօր. Անաթոլի Բվաշնինի հետ:

Հանդիպումներուն ընթացքին քննարկուած են տնտեսական եւ ռազմական ոլորտին ներս համագործակցութեան վերաբերող հարցեր:

●Սեպտեմբեր 16ին 18 պաշտօնական այցելութեան մը համար Երեւան պիտի հասնի Վրաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Թեւկատի:

Ան հանդիպումներ պիտի ունենայ իր հայ պաշտօնակից՝ Սերժ Սարգսեանի, եւ երկրի ղեկավարութեան հետ:

ՃԱՇԱՐԱՆ ՌԻԱՏԻ ԷԼ ՍԱՄԱՐ

(ժուրն էլ Պալոս, Պալոսն ղեպի Պրումանայի ձամբուն վրայ)

ԳԵՂԱՏԵՍԻԼ ԿԱՅՐ, ԾԱՌԱՋԱՐԳ, ԸՆԴՆԱԿԱՆ ՄՅՈՒՆՈՒՄ

●Սիշտ առատ եւ քարմ աղանդեր, համադամ ձաշեր, սակ մեկ անձի 8\$: Խմիչքը՝ ըստ ապսպրանքի:

●Շայկական, արաբական եւ երոպական երածըլտուրի:

●Ամեն շաբաթ երկուցեր յատուկ յայտագիր հանրածառք երգիչներու եւ ճուղախումբի ընկերակցութեամբ եւ մասնակցութեամբ արաբական պարուի:

●Փոքրերու յատուկ խաղաղալը:

●Կը ստանձնենք միութեանակա եւ անձնակա խրախմանքներ յարմար գիներով:

ԾԱՆՈԹ. 3 ատուկ ձաշացուցակ, 27 տեսակ բաց աղանդեր, բաց խորոված, բաց խմիչք՝ օղի, զարեջուր եւ զովացուցիչ:

ՍԵԿ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ ՄԻՅՈՒՄ 17\$:

ԸՆԴՆԱԿԱՆ. 04 - 808707 եւ 03 - 360667:

Շար.՝ Էջ 10

ՄԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԳԾՈՎ ԻՐ ԿԵՑՈՒԱԾԵՐ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԾԱՐԾԵՑ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՄՏԱԿԱԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՔՆՆԱԳՐՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարոնի Եպիսկոպոսներու խորհուրդը երեկ Տիմանի մէջ մարոնիներու Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքին գլխաւորութեամբ գումարեց ժողով մը, որմէ ետք հրապարակեց իր երրորդ կոչը:

Կոչին մէջ կը նշուի, որ իւրաքանչիւր կողմ կամ կուսակցութիւն մասնաւորապէս քրիստոնէայ, բաժնուած է երկուքի եւ լարուած իրարու դէմ:

Կոչը շեշտեց, որ հայրենիքին նուիրումով թիւն գրեթէ գոյութիւն չունի, իսկ անձնական շահերը կը գերադասուին հաւաքականութեան շահերէն եւ տնտեսապէս տագնապի մէջ գտնուող մարդիկ կը ստիպուին իրենց սկզբունքներէն հրաժարիլ, որովհետեւ այդ բաժանումը կրնայ տակաւին շարքերը խանգարել, բոլորին ուշադրութիւնը կեդրոնացնելով քաղաքական ներքին հարցերու վրայ:

Կոչը աւելցուց, որ դատական ատեանները Լիբանանի մէջ քաղաքական յստակ կողմնորոշումներուն ունին եւ հանրութիւնը տեղեակ է այս իրողութեան եւ թէ բազմիցս անարդար վճիռներ արձակուած են ու անմեղ երիտասարդներ, որոնք խօսքի ապատութիւնը ի մտի ունենալով արտայայտուած, ենթարկուած են խոշտանգումի ու բանտարկուած: «Կը ցաւիք յայտնելու, որ տրուած որոշումները բազմիցս ենթակալ դարձած են գործադրողներու կամ պատասխանատու բարձր մարմիններու քննադատութիւն»:

Կոչը շեշտեց նաեւ, որ ժողովուրդը իրաւասու է հարցաքննելու երեսփոխանները, որովհետեւ անոնց մէծ մասը ոչ մէկ բացատրութիւն կու տայ իր գործունէութեան մասին:

Կոչին մէջ հաստատ կերպով նշուեցաւ թէ ցանկութիւն կայ քոյր երկիր Սուրիոյ հետ երկկողմանի յարաբերութիւնները ամրապնդելու բոլոր լիբանանցիներուն միասնականութեամբ, հեռու մնալով յարուածութիւն իրաւորելու որեւէ արարքէ եւ ատելութիւն սերմանող ձեռքերէ, նկատի ունենալով Լիբանան - Սուրիա միացեալ շահերը: «Սակայն մենք իրաւասու պէտք է ըլլանք մեր տան պարտականութիւնները մեր ձեռքերով կատարելու, պահպանելու համար իսկական եղբայրական կապերը», աւելցուց յայտարարութիւնը:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Մելինէ Վարդապետեան
Տէր եւ տիկին Յակոբ եւ Հելեն Վարդապետեան եւ դուստրերը՝ Ծիա եւ Մելանի
Տիար Վահիկ Վարդապետեան
Օրիորդ Սոնա (Նոնո) Վարդապետեան
Տիկին Սոնա Ահարոնեան
Տէր եւ տիկին Տիրան եւ Անահիտ Կիւմիւշեան
Տէր եւ տիկին տղթ. Վահրամ եւ
Գեղարփի Ենիգոմշեան եւ ընտանիք
Տիկին Պերճուհի Տէրեան եւ ընտանիք
եւ համայն ազգականները կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, մօրեղբոր, քեռայրին եւ հարազատին՝

ՎԱՐԴԱԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆԻ (Ծնեալ՝ Ատանա, 1913ին)

մահը, որ պատահեցաւ 26 Օգոստոս 2002ին, Լոս Անճելըս:
Հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբերին Հոլիվուտի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Տիգրան Գարաճեան
Տիար Վաչէ Գարաճեան
Տէր եւ տիկին Գէորգ եւ Շողիկ Թիւթիւնեան
Տէր եւ տիկին Արա Աւետիսեան
եւ համայն ազգականները կը գուժեն իրենց մօր, քրոջ եւ հարազատին՝

ԱԼԻՍ ԳԱՐԱՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ԱԻԵՏԻՍԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2002ին, Երեկոյան ժամը 11:30ին:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեշաբթի, 3 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրըն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
●Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Անթիլիաս «Սիմիթեան» շէնք, «Կալորի ԱՉԱՐԻ» ետին, Տրոյ յարկ, Երեքշաբթի 3, Չորեքշաբթի 4 եւ Հինգշաբթի 5 Սեպտեմբերին:

ՍԱԹԸՐՖԻԼՏ ԸԱԻԱՍՏԵՑ, ՈՐ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՄԻՋԱՍՈՒԽ Զ'ԸԼԼԱՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԸԱՐՅԵՐՈՒՄ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Միջին Արեւելքի հարցերու փոխօգնական Տէյվիտ Սաթըրֆիլտ երէկ այցելութիւններ տուաւ իշխանութեան երեք պետերուն եւ այլ անձնաւորութիւններուն:



Ներու պատճառը բացատրեց ըսելով, որ Լիբանանի մէջ աշխուժ քաղաքացիական կռիւններն ու քաղաքական շրջանակը բարձր կը գնահատուին Միացեալ Նահանգներու կողմէ եւ թէ շատ կարեւոր է լիբանանեան ընկերութեան տարբեր հատուածներու տեսակետը լսել:
Թղթակիցներ հարց տուին Քըրնէթ Շահուանի հանդիպումի եւ Միացեալ Նահանգներու կապին մասին, ակնարկելով այն տարածայնութիւններուն, ըստ որոնց հանդիպումի անդամներէն ոմանք Ուաշինկթընի ցուցմունքներուն կը հետեւին կամ անոր կ'ապաւինին: Սաթըրֆիլտ ըսաւ, որ Լիբանանի կառավարութեան եւ լիբանանցի անհատներու հետ Ուաշինկթընի խօսակցութիւնները ցոյց կու տան Միացեալ Նահանգներու

յարգանքը, հիացումն ու գնահատանքը Լիբանանի մէջ հարցերու լայնածիր եւ բազմակողմանի քննարկումի սովորութեան, եւ այս երկխօսութիւնը Լիբանանի գանձերէն մէկն է: «Ձեր երկրին մէջ կան ճակատագրական հարցեր գործ պէտք է քննարկել եւ լուծել: Անոնք ձեր հարցերն են»

Շար.ը՝ էջ 10

ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻԲ ՀԱՐԻՐԻ ՄԵԿՆԵՑԱԻ ՅՈՐԴԱՆԱՆ

Վարչապետ Ռաֆիբ Հարիրի երկէ Ամմանի մէջ Բանդիպում մը ունեցաւ Յորդանանի Ապտալա բազաւորին հետ: Քննարկուեցան շրջանային հարցեր արձանագրուող վերջին զարգացումներու լոյսին տակ, ինչպէս նաեւ՝ Լիբանան - Յորդանան երկկողմանի յարաբերութիւնները:

Վարչապետ Հարիրի Յորդանան ուղղուեցաւ ցաւակցութիւններ յայտնելու նախկին վարչապետ իշխան Ջայէտ Պըն Շաքէրի մահուան առիթով:

ՀԱՐԱՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԻԲ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅՈՒԱԿ ԵՒ ՎԱՍԻԱ ԹԻԹԵԼԵԱՆ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՎՐԵԾ ԵՒ ՄԱՐՈ ԹԱՂԵԱՆ
Կը հրաւիրեն ձեզ ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝
ՐԱՖԻԲԻ ԵՒ ԾՈՎԱԿԻ
Ս. Պսակի Խորհուրդին,
Որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 6 Սեպտեմբեր 2002, Երեկոյան ժամը 7:30ին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ:
Կնքահայրութեամբ՝
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ՍԱՐՏԻԿ ԵՒ ԱԼԻՍ ՊՈՂՈՍԵԱՆԻ
●Նկատի ունենալ իբրեւ անձնական հրաւեր:
●Շնորհաւարութիւն տեղւոյն վրայ:

ՔԵՍԱՊ ԲԵՍԱՊ

ՀԱՐԱՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԻԲ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅՈՒԱԿԱՆԵՍ ԸԱՅՐԱՊԵՏԵԱՆ
ՏԻԱՐ ԱԲՐԱՄԱՍ ՂԱԶԱՐԵԱՆ
Սիրով կը հրաւիրեն ձեզ ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

ԱԻԵՏԻՍԻ ԵՒ ՆՈՐԱՅԻ

Ս. Պսակի Խորհուրդին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Երեկոյան ժամը 5:00ին, Հայ կաթողիկէ Ս. Միքայել Եկեղեցւոյ մէջ, Քննապ:
Խաչեղբայրութեամբ՝
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԷՅՍԱՆ ԵՒ ՔԻՆՏԱ ԹԸՐՊԵՅԻ
●Ներկայս ընդունիլ իբրեւ անձնական հրաւեր:
Շնորհաւարութիւն տեղւոյն վրայ
Ընդունելութիւն ժամադրութեամբ
Teleg: HAYRABEDIAN - GHAZARIAN
Arm. Catholic St. Mikael Church, Kessab - Lattakia - Syria
E-mail: LIZHAS@namag.com

L.Յ.Գ. Լ.Ե.Ս.
ՄԱՍՆԱԿՅՈՒՐ
ԳՐԵԱՆԱԿԵՐԻՆ
www.lmnyan.com

Ախալքալաքի «Ուրբէն Տեր Միգասեան» վարժարանի «Եղիկ Գայայեան» գրադարանի հիմնումին համար գրքահաւաքին մասնակցիլ փափաքողները կրնան դիմել ԼԵՄԻ կեդրոն, ամէն օր ժամը 6:30էն սկսեալ կամ հեռաձայնել՝
03 - 802774 թիւին:

ԾԱՆՈՒ ԿԱՍ
ՎԱՐՉՈՒ ԽԱՆՈՒԹ
●Անթիլիաս, Սիմիթեան
շէնքեր, 60 քառ մէթր: Ըեռ. 03 - 310203:

ԾԱՆՈՒ
ՅԱՐԿԱՐԱԾԻՆ
●Անթիլիաս, Սրգեդի սկիզբ: Ճամբորդութեան պատճառով: 160 քառ. մէթր, 8րդ յարկ, գեղատեսիլ դիրք: Դիմել՝ հեռ. 01-267909:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի
ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍ
ԵԼՈՅԹ ԿՈՒՆԵՆԱՅ
ՓՈԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ՝ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԻՆ
(Դեկավարութեամբ՝ ԽԱՉԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ)
Տեղի կ'ունենայ Ծառաթ, 7 Սեպտեմբեր 2002, Երեկոյան ժամը 9:00էն սկսեալ, «BURJ AL HAMAM» ձաշարանին մէջ, Պրումմանա:
Տոմսերը ստանալ Ըամազգայինի գրախանութն Պուրճ Ըամուտ, Տիպոքէ ճեղքայն եւ OBELIX գրախանութն, Անթիլիաս:

ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻ ԱՅՆՃԱՐ
ՃԱՇԿԵՐՈՅԹ
(Ի նպաստ եկեղեցւոյ վերաշինութեան)
Ղովանաւորութեամբ՝ Հայ Աւետարանական Ըամայնքային Ժողովի
Նախագահութեամբ՝
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՓԱՆՈՍ
ՓԱՆՈՅԵԱՆՆԵՐՈՒ
●Գեղարուեստական ձոխ յայտագիր
●Վիճակահանութիւն
Տեղի կ'ունենայ Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Երեկոյան ժամը 8:00ին «Նապա Այնճար» ձաշարանին մէջ:

ԵԹԵ...
●Միջնակարգի դասարաններու աշակերտ եւ, կրնա հետեւիլ նախապատրաստական (Ե. Ք.) դասընթացին:
●Հասած եւ ՊՐԵՕՎԵԻ դասարան, կրնա հետեւիլ բոլոր Պաշտօնային դասարանին:
●Ունիս ՊԱԶԱԼՈՐԵԱ, կրնա հետեւիլ ՓՕԼԻԿԼՈԹԻ համալսարանական դասընթացին:
●Ստաշելի կորթնակ, առաւօտեան եւ երեկոյան դասընթաց, ֆրանսերէն եւ անգլերէն բաժններ:
ՓՈԼԻԿԼՈԹ ԲՈՒԼԵՃ: Ըեռ. 01 - 251320
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ Պ. ՇԵՄՍԵԵԱՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆ PHOTO NERSES
ԱՐԱԳ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՆ
ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
Ձեր ուրախ առիթներու լուսանկարները տպեցէք նոր հասած ԱՐԴԻԱԿԱՆ DIGITAL մեքենայի միջոցով, որակաւոր եւ զանազան չափերով:
Ստանձնում 20 վայրկեանէն:
Լուսանկարները կ'արձանագրենք CDի եւ կամ FLOPPY տիպի վրայ:
Cameraներու ձոխ հաւաքածոյ, ալպոմներ եւ նկարի շրջանակներու ընտիր տեսակահի:
Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով:
Պուրճ Ըամուտ, Զաղաքապետարանի փողոց, «Սանթր Արն»-ի դիմաց: Ըեռ.՝ 01 - 261858 եւ 01 - 255992:

Շ. Մ. Ը. Մ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՋՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

Երէկ, Չորեքշաբթի 4 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 10:30ին, Անա ԲՖՐՅԱՅԻ շրջանին մէջ տեղի ունեցաւ Շ. Մ. Ը. Մ.Ի սկառուական միջմասնաճիւղային բանակումի պաշտօնական բացումը:

Բանակումին կը մասնակցին Շ. Մ. Ը. Մ. Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Ժտէյաթի, Պատըրիէի մասնաճիւղերէն եւ Շ. Մ. Ը. Մ.Ի շեփորախումբէն շուրջ 500 քուր-եղբայրներ:

Բացման արարողութիւնը կատարուեցաւ սկառուաներու տողանցքով եւ դրօշակի արարողութեամբ: Ապա, խօսք առաւ Լիբանանի շրջանային ընդհանուր խմբագետ եղբ. Կարօ Մուրաջանեան, որ անդրադառնալով միջմասնաճիւղային բանակումի կարեւորութեան, ըսաւ, թէ այս տեսակի բանակումներ առիթ կը ստեղծեն մասնաճիւղերուն



Միջմասնաճիւղային բանակումի բացման արարողութիւնը կատարուեցաւ սկառուաներու տողանցքով եւ դրօշակի արարողութեամբ:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ԲԱՅԱՏՐԵ ՆԻՒՍԸՆԸ ՊԱՇՏՕՆԱԶՐԿԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ հրապարակեց Լիբանանի պաշտօնակազմի խումբին մարտիչը պաշտօնակրկած ըլլալուն պատճառները, որոնցմէ է մարտիչ ճոն Նիւմարի անվայել կեցուածքը՝ խումբին մարտիչներուն ներկայութեան երկրին նախագահը վարկաբեկելու իր արարքով: «Կենսական էր ու հրամայական որ համաձայնեիք պաշտօնակազմի ֆետերատիւնին հետ վայել պաշտօնական ընելու մասին», ըսաւ Յովնանեան:

Ապա, ան շնորհաւորեց Լիբանանի պաշտօնակազմի խումբը, որ հակառակ իր պարտութեան, կրցաւ աշխարհի ախոյեաններու եւ պաշտօնակազմի հակառակներուն հետ մրցել բարձր պահելով Լիբանանի դրօշակը եւ Ինտիանափոլիսի մէջ կայացած մրցումներուն ընթացքին յաջողեցաւ համախմբել երեք հապարտութիւն լիբանանցիներ, որոնք քաջալերեցին իրենց պաշտօնակազմը՝ Լիբանանը:

Նախարար Յովնանեան իր խօսքը եզրափակեց ըսելով, որ համաշխարհային մակարդակի վրայ ախոյեաններու հետ մրցակցութիւն ունեցած լիբանանցի երիտասարդութիւնը արեւելի եւս պէտք է քաջալերել եւ համագործակցել՝ ստեղծելու համար կանոնք խրախուսելու ու յառաջ մղելու բարենպաստ մթնոլորտ:

ՄՏՔՈՎ ԹԵՐԱՆԸ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ՉՈՒՐԹՆՈՅ» ԿԵԳՐՈՆ

ՎԵՐԱՍՈՒՏ
2002-2003 ՏԱՐԵՆԸՋԱՆԻ

- Արձանագրութիւնները կը շարունակուին, Սեպտեմբեր 10էն սկսեալ, առաւօտեան ժամը 9:00էն 12:00, բացի Չարթթ եւ Կիրակի օրերէն:
- Վերանուտ՝ Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2002:
Վեդրոնը կը շարունակէ ընդունիլ ինչ եւ նոր աշակերտներ՝ երկսեռ մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ:
Վեդրոնը ունի աշխատանոցի դրոթիւն եւ ինքնաշարժի սպասարկութիւն:
Կասցէ՝ հալիլ Պատուոյի, մախլիմ Կեմաց վարժարան:
Եռաձայն՝ 01-446442
Եռապատճէն՝ 01-562373
E-mail - ZVARTNOTZ@terra.net.lb
Ծ. Մասնագիտացած դաստիարակութիւնը առաւել չափով արդիւնաւետ կ'ըլլայ, երբ մանուկները փոքր հասակին կեդրոն կը ներկայանան:

ՏԵՆՉՈՒԹԻՒՆ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԵՐԿՍԵՆՎԱՐԺԱՐԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Միութեան վարժարանի տնօրէնութիւնը կը տեղեկացնէ, թէ 2002-2003 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են, ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն 12:00:
Վարժարանս ունի 2 բաժին.
1) Ֆրանսերէն - արաբերէն - հայերէն իսկ երկրորդական լեզուն՝ անգլերէն:
2) Անգլերէն - արաբերէն - հայերէն, իսկ երկրորդական լեզուն՝ ֆրանսերէն:
3) Օթորպոլ ապահովուած է բոլոր շրջաններուն համար:
4) Ժառանգաւորներ կ'ընդունուին: Կրթաքաջակի դիւրութիւնը պիտի տրուի կարիքաւորներուն:
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել վարժարանի տնօրէնութեան: Եռաձայնի թիւեր. 05-451115 - 05-451124:

Ս. ԱԳՆԵՍ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐժԱՐԱՆ

2002-2003 տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները ինչ եւ նոր աշակերտներուն համար պիտի կատարուին Երկուշաբթի 9 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 12:30, բացի Չարթթ եւ Կիրակի օրերէն:
Դիւրացնելու համար վերամուտի աշխատանքները, մախլիմ աշակերտները պարտին արձանագրուիլ որոշուած թուականներուն:
Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան թուղթի լուսապատճէն կամ «Իխրաճ քայտ», 2 լուսանկար եւ մախորդ տարուան վիճակագրոյց:
Մանկագրութեւ կ'ընդունուին երեք տարեկանէն վար փոքրիկները, պայմանաւ որ ամօր կարողութիւն ունենան հասկնալու եւ հասկցունելու:
Վերաքննութիւնները տեղի կ'ունենան Ուրբաթ 13 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 9:00ին:
●ՎԵՐԱՍՈՒՏ
Գ. Միջնակարգ (պրտով) Երեքշաբթի, 17 Սեպտեմբերին
Միջնակարգ (7րդ 8րդ) եւ մախակրթարան՝ Երկուշաբթի, 30 Սեպտեմբերին
Մանկագրութեւ Դիմագրութեւ, 3 Ընկերութեան
●ԲԱՐԻ ՎԵՐԱՍՈՒՏ
Ս. Ագնէս վարժարանի տնօրէնութիւնը ջերմապէս կը շնորհաւորէ պրտովի յաջողած աշակերտները, մաղթելով ամօր բարի եթ, դէպի կեանքի նոր բարձունքներ:
Ճնորհաւորութիւններ՝ ուսուցչական կազմին եւ մեր սիրելի ծնողներուն:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԳՆԵՍ ՎԱՐժԱՐԱՆԻ

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ

ԼԱԿԱԳՈՅՆ ՆՈՒԵՐԸ

ՁԵՐ ԵՐԱՐՁԱՆՆԵՐՈՒՆ ԱՐԱ ՔԵՔԵՃԵԱՆ ՀԱՍՏ.

Տարեդարձի, անուանակոչութեան, նշանախօսութեան եւ ամուսնութեան փարեդարձի:

Անձին անունով, մակնունով եւ ընտանեկան նկարներով, կէս ժամանակ VIDEO CLIPՆԵՐ

ԲՈՒՐՈՒ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՁԵՐ VIDEO ԵՐԻՋՆԵՐԸ ԿԱՐՁԱՆԱԳՐԵՆԸ CDԻ ԿՐԱՅ

Կասցէ. ԱՐԱ ԶԵՔԵՃԵԱՆ ՀԱՍՏ., Պուրճ Համուտ, Բաղաբապետարանի հրապարակ, հեռ. 01-261696 եւ 03-250518:

السفر **السياحة** **البيروت**

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

السفير **النصار** **الديار** **المستقبل** **الاتحاد**

Չորեքշաբթի, 4 Սեպտեմբերի լիբանանեան մամուլը կը քննարկէ նիւթերու բաւական ընդարձակ շրջագիծ մը սկսելով կառավարութեան նիւտի անցուցարձերէն մինչեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Տէյլիտ Սաթրֆիլտի շրջան այցելութիւնը, Իրաքի դէմ աներկեան հաւանական հարուածի մը կարելիութիւնը եւ իրաւիճակը՝ պաշտօնակազմի գրաւելու շրջաններուն մէջ:

Սաթրֆիլտի հերթին, «Տիար» օրաթերթը 2003ի պետական պիտուէի քննարկման նուիրուած կառավարութեան նիւտը բնութագրէ «ընթացիկ» բառով եւ յայտնեց, որ կարգ մը նախարարներ ժողովին ընթացքին կասկած յայտնեցին պիտուէի նախագիծին մէջ երեւցած կարգ մը թիւերուն շուրջ: «Պայրաք» կը յայտնէ, թէ հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի իրարհակադրութեան շնորհիւ պիտուէին շուրջ կառավարութեան քննարկումները ընթացած են շատ հանդարտ մթնոլորտի մը մէջ: Հակառակ գոյութիւն ունեցող թերիւներուն եւ քննադատութիւններուն, պետական պիտուէի նախագիծը Հիւզաբթի օր պիտի վաւերացուի կառավարութեան կողմէ:

Իր երէկուսան թիւով «Անուար» բացատրեց, թէ կառավարութեան նիւտին կարգ մը նախարարներ հակաձայնեցին պետական պիտուէի նախագիծին մէջ ներկայացուած թիւերուն շուրջ եւ պահանջեցին տուրքերու նուազումը: Խորհրդարանական «Սորիդակցա» կան «Նադիպու»-ը այցելութիւններ կատարելու խորհրդարանի նախագահ Ենպիի Պրիի: «Անուար» կը վերնագրէ. «Պրիիի «Սորիդակցական» Հանդիպումը՝ նկատեցաւ պայմանաւորուած թիւերով, եւ ոչ՝ համայնքային ներկայութիւնով»:

Լիբանանեան բոլոր թերթերն ալ արձագանգած են Հրապարակի պետական պիտուէի նախագիծին գծով որդեգրած կէցուածքին: «Մուսաբապա» կը գրէ, թէ Հրապարակ պետական պիտուէի նախագիծը որակեց պետութեան սնանկացման յայտարարութիւն մը:

Միւս կողմէ, անդրադառնալով Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի օգնականի տեղակալ Տէյլիտ Սաթրֆիլտի շրջան այցելութեան, «Տիար» կը հաղորդէ, թէ Սորիային Լիբանան հասնելով ան տեսակցութիւն ունեցաւ Քրիսթ Ծառուանի հանդիպումին անդամ կարգ մը անձնատուրութիւններու հետ եւ յայտնեց, թէ մեծերկեան վարչապետեան պիտուէի իր համապատասխանութիւնը Լիբանանի պիտուէի նախագիծին հետ կ'ընդհարուի:

«Պայրաք» տեղ կու տայ խորհրդարանի նախագահ Ենպիի Պրիիի այն կարծիքին, որուն համաձայն պետք է մշակուի խորհրդարանական բնութիւններու արդար

օրէնք մը, որուն շնորհիւ կարելի ըլլայ նուազեցնել քրիստոնէայ ու թերիւն մտահոգութիւնները:

«Մաֆիթ» իր առաջին էջին վրայ կ'անդրադառնայ Ուսուցչական գետի հարցին եւ այս հարցին նկատմամբ Իսրայելի կէցուածքին: Ըստ թերթին, իսրայելեան աղբիւրներուն համաձայն, այս հարցը Լիբանանի հետ նոր պատերազմի մը պատճառ կրնայ դառնալ եւ այս պատճառով այս Իսրայելի դիմած է Ուսուցչական եւ ՄԱԿի միջամտութեան:

«Մաֆիթ» իր 7րդ էջին մէջ ընդարձակ յօդուած մը տրամադրած է «Սպանողի պաշտպանութեան» օրէնքի նախագիծին, որ կը խօսուի նաեւ վեղծարարութիւնը շնջելու գծով որդեգրուած պատճառներուն մասին:

«Նահար» թերթը կ'անդրադառնայ շրջանային մակարդակի վրայ իր կարեւորութիւնը ունեցող իրաքեան հարցին: Թերթը կ'ը գրէ. «Միւս Սպանող Տուր կը հաստատէ, թէ պիտուէի նախագիծին ընդհարուածութեան նկատմամբ Լիբանանի պիտուէի նախագիծը որակեց պետութեան սնանկացման յայտարարութիւն մը»:

«Մուսաբապա» թերթը իր կարգին անդրադառնալով պաշտօնակազմի գրաւելու հոդուերուն մէջ տեղի ունեցող իրաքեան ժողովներուն կը գրէ, թէ պաշտօնակազմը երեք տուր պարտող բանաձեւով մը վաւերացման:

«Պայրաք» տեղ կու տայ խորհրդարանի նախագահ Ենպիի Պրիիի այն կարծիքին, որուն համաձայն պետք է մշակուի խորհրդարանական բնութիւններու արդար

ՎԵՐԱՍՈՒՏ

ՀԱՅ ԱԻՏՏ. ԸԱՄԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ԵՐԿՐԳ. ՎԱՐժԱՐԱՆ

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ
Եռ. 261749 - 240995
Ֆաքս 240996 Փոստարկի 80907
E Mail : aessbh@cyberia.net.lb

Ըայ Աւետարանական Ծամլեան Թաթիկեան երկրորդական վարժարանի հոգաբարձութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ 2002 - 2003 տարեշրջանի վերամուտի վարժարանը կը վերաբանայ երկրորդական Գ. դասարանը (bacc., Life Science):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
Արձանագրութիւն՝ սկսեալ Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2002էն:
Արձանագրութեան համար վարժարանիս գրասենեակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթիէն Ուրբաթ՝ առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

ՎԵՐԱՍՈՒՏ
Վերաքննութեան կարտ աշակերտներ պարտին ներկայանալ վարժարան, 11էն 13 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 9:00ին:

ՎԵՐԱՍՈՒՏ
ա. Պրտով եւ երկրորդական Գ. կարգի աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի 16 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 8:00ին:
բ. Միացեալ բոլոր կարգերու աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի 30 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 7:30ին:

●Այս առիթով Ըայ Աւետարանական Ծամլեան Թաթիկեան երկրորդական վարժարանի հոգաբարձութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ վարժարանիս պրտով դասարանի 18 աշակերտներէն 16ը յաջողած են պրտովի կառավարական ընտրութեան (որոնցմէ մէկը՝ բարձր յիշատակութեամբ, իսկ երկուրը՝ յիշատակութեամբ):

Ջերմագին շնորհաւորութիւններ մեր աշակերտներուն, իրենց ընտանիքներուն եւ ուսուցչական կազմին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՆԱՍԱԿ՝ ԸԱՅՐԵՆԻՔԸ

ՆՈՐ ՀԱՅԵԱՑՔՈՎ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Մեր շենքի երկրորդ յարկի բնակիչ Գագիկը վաղուց չէի տեսած: Քսանամեայ որդին Միամի հասցուցած կամ փախցուցած, կնոջ ու 18ամեայ աղջկան հետ ապրող Գիտութիւններու Ակադեմիայի երբեմնի աշխատող էր Գագիկը, որ սակայն վերջին տաս տարիներուն գլուխը աչ ու ծախ գարնելով, մերթ կանաչեղէն ծախելով, մերթ իրանութի մէջ վաճառող դառնալով, յաճախ գործ փնտռելու համար քաղաքի տարբեր շրջանները բափառելով, փորձած էր ձեռով մը իր եւ ընտանիքին «գոյութիւնը պահպանել»:

Ամէն անգամ իր պատահականօրէն հանդիպելիք, զիս իր տունը կը հրաւիրէր, իր տղուն արտասահման ուղարկելու պարտաւորութեան մասին բացատրութիւններ կու տար, կ'արդարանար, կը յուզուէր:

Քանի մը օր առաջ զինք տեսայ մեր թաղին մօտէն անցնող հանրակառքի կանգառին առջեւ կեցած: Միասին իջանք քաղաքի կեդրոն: Բոլորովին փոխակերպուած մարդ մըն էր ան:

Աշխատանք գտած էր «Մի. Այ. Թ.» համակարգիչներ կազմող ու վաճառող ընկերութեան մօտ. անոր երեւանեան գլխաւոր վաճառատան տնօրէնն էր: Համակարգիչներու աշխարհը կը գինովցներ զինքը, կը փորձէր անգլիերէնը բարելաւել, կարդալ ու հասկնալ ուղեցոյցները, կ'ուզէր խորացնել ծանօթութիւնը անոնց մասին, իր գիտական մարդու զննող միտքը կ'ուզէր պրպտել ու սորվիլ այս սարքերուն աշխատելու ձեւը, անոնց գործող տրամաբանութիւնը:

Գործը սրտին մօտիկ էր. գիտութեան հետ առնչութիւն մը գտած էր անոր մէջ, կեանքը վերստին արժեւորելու, իր կարողութեան ու հետաքրքրութեան համապատասխան աշխարհի մը դուրը բացուած էր իրեն համար:

«Արօ» շան, չգիտես՝ ինչքան երջանիկ եմ, նորից եմ սիրահարուել կնոջս, ընտանիքիս, հայրենիքիս, եւ հողին ու ջրին: Գագիկի խօսքերն էին, պայծառացած հակատով ինծի նայող հարեւանիս անկեղծ զեղումը:

Նախապէս խեղճացած ու նուստացած, անգործութեան ու անկարողութեան մատնուած հարեւան, այժմ խնդրեմ աչքերով կը հրաւիրէր զիս այս անգամ իր նոր գործատեղին: Կիրակի օր էր, հանգիստի օր, վաճառատունը փակ, սակայն Գագիկ վարակիչ ոգեւորութեամբ մը կ'երթար այնտեղ շաբթուան գործունէութիւնը ամփոփելու, արհեստագիտական գիրքերը կարդալու, աշխատավայրը կարգի դնելու ու երեկոյեան, հոգեկան անչափ գոհունակութեամբ ու երջանիկ՝ տուն վազելու:

«Նորից եմ սիրահարուած»ը եւ ընդունեցի իրեն խոստովանութիւն անցելու տարիներուն ինքզինք լիարժէք մարդ ու ամուսին չնկատող այս ազնիւ հոգիին կողմէ: Ապառողջ կեանք մը, որով կ'ապրէր ոչ միայն ինք, այլեւ՝ ամբողջ ազգի մը մէկ կարեւոր հատուածը, իր բոլոր ծանրագոյն բարոյական ու հոգեկան խնդիրներով, ընտանիքներ քայքայող ներքին, անբնական յարաբերութիւններով:

Հիմա արդէն ուրիշ է, առնուազն Գագիկի համար: Այդ ողբերգական էջը, կեանքի այդ ծանր յիշողութիւնները ան մէկզի կ'ուզէ դնել, վերստին կ'ուզէ դառնալ իրական ամուսին, հոգատար ու խնամող ծնողը, կ'ուզէ դառնալ այս երկրին լիիրաւ քաղաքացի:

Տղան ալ այս օրերուն Միամիէն Սան Ֆրանսիսկո կ'արեւելէ իր Ամերիկա կեցուցումը սիրով անհրաժեշտ լուծելու համար: Այդ ալ իր խնդիրն էր մեծ բեռ մըն է: Եթէ այսօրուան վիճակը ունենար, երբեք տղան պիտի չքաջալերէր մեկնիլ Հայաստանէն: Զուակի հետադարձութիւնը այս օրերուն անլիցաւ կը պատճառէ իրեն: Ժամանակին անլիցաւ դիւրին էր հաշտուիլ կարօտի ցաւին: Ի վերջոյ այդ տարագրութիւնը արդարացելու համար երեսնամեայ ուսման վարձը պայահովելու իր անկարողութիւնը կը վկայակոչէր, հազար ու մէկ այլ դժուարութիւններու՝ ապրուստի տարրական պայմաններ ստեղծելու իր դժուարութիւններուն մասին կը պատմէր:

Գագիկին ոգեւորութիւնը այլոց փոխանցելը այնքան ալ դիւրին չէ: Հայաստանի իշխանամետ նկատուող մամուլը լիքն է դժուարութիւններ յաղթահարողներու դրուագներով: Այստեղ, այդ պատմութիւնները որոշ արհամարհանքով կ'ընդունուին ու կը նկատուին մերկ քարոզչութիւն: Գագիկի ու կը նկատուին, ինծի համար, մօտիկ անձնաւորութեան մը կեանքի փորձն է, յամառութեան ու յարատեւութեան արդիւնքը շոշափած մարդու մը համետ իրագործումը, որ կրցաւ առնուազն զիս ալ մղել վերստին սիրահարուածի հայեացքով նայելու չորսդիս, հայրենիքիս:

ԱԲՕ ՊՈՂԻԿԵԱՆ

www.lemagan.com

ՀՕՄԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ 55ԲԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Ոչ կառավարական կազմակերպութիւններու 55ԲԴ տարեկան համագումարը տեղի պիտի ունենայ ՄԱԿԻ կեդրոնատեղիին մէջ, Նիւ Եորք, 9էն 11 Սեպտեմբերին:

Համագումարին թեման է «Տագնապներ դուրս եկող ընկերութիւններու վերակազմումը. միացեալ պատասխանատուութիւն մը»: Իրրեւ անդամ ՄԱԿԻ ոչ կառավարական կազմակերպութեանց, ՀՕՄԸ, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իր մասնակցութիւնը պիտի բերէ այս համագումարին:

Համագումարը կազմակերպած է ՄԱԿԻ Հանրային Սպասարկութեան բաժանմունքը՝ գործակալութեամբ ոչ կառավարական կազմակերպութիւններու կազմակերպութիւններու կազմակերպութիւններու չունենալու միջոցով:

Հինգ ծրագրային նիստերու եւ 30 ոչ կառավարական կազմակերպութիւններու կիսօրեայ աշխատանքներու կողքին, պիտի տրուին նաեւ բանախօսութիւններ ՄԱԿԻ ընդհանուր քարտուղարի տեղակալին, ՄԱԿԻ Մարդկային Իրաւանց յանձնախումբի Իրաւանց ընտանիքի պաշտօնակատարին եւ այլ հրաւիրեալներու կողմէ:

Շուրջ 90 երկիրներէ ոչ կառավարական կազմակերպութիւններու անելիք 1700 ներկայացուցիչներ, Հանրային Սպասարկութեան բաժանմունքի եւ Տնտեսական եւ Ընդհարակի խորհուրդի (ԷՔՈՍՊ) անդամներուն հետ պիտի մասնակցին սոյն համագումարին:

Համագումարը պիտի բացայայտէ միջազգային հանրութեան դերը տագնապներէ դուրս եկող ընկերութիւններու վերականգնումին մէջ՝ միաժամանակ քննելով այդ գծով տարուած ճիգերուն հասարակաց փորձառութիւնը, արձանագրուած թերութիւններն ու յաջողութիւնները եւ լաւագոյն ձեւերը, որ մարդիկ օգտագործած են:

ՀՕՄԸ համագումարին պիտի մասնակցի կիսօրեայ աշխատանքատու, որ տեղի պիտի ունենայ:

ԾԱՌԱՏՆԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Այս տարի «Հայաստան» ընկերութեան պաշտօնեաները նախատեսուած 183 հեկտարին փոխարէն տնկած են 208,5 հեկտար ծառատնկուած են սոճիի, կաղնիի, հացենիի, հաճախ, խաչափայտի, թղկենիի ծառատնակներ:

Ծառատնկումի իմաստով առաջատարը կը մնայ Գուգարքի մարզը, ուր տնկուած են վերականգնուած է 80 հեկտար անտառ եւ նախապէս հատուած անտառային շերտ մը: 20 հեկտարով անեցած են Սիսիանի, 10 հեկտարով՝ Գորիսի, 8,5 հեկտարով՝ Իջևանի եւ 25 հեկտարով՝ Սեւաբի անտառային տարածքները:

Երեքշաբթի, 10 Սեպտեմբերին, ՄԱԿԻ կեդրոնատեղիին մէջ:

Աշխատանքատուը կը կոչուի՝ «Ձերոյն պատկաս. առիթներ վերականգնող մտնետութիւններու մէջ»:

ԱՍԵՐԻԿԱՐԱՅ ԿԵԱՆԸ

ՐԱՖՖԻ ԳՐԱՃԵԱՆ՝ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ

Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը հաղորդէ, թէ Քալիֆորնիոյ նահանգապետ Կրէյ ԵՅՎԻՍ նահանգի յայտնի գործարարներէն Րաֆֆի Գրաճեանը նշանակեց Ձեռնարկատիրութեան, առեւտուրի եւ ճարտարարուեստի զարգացման նահանգային խորհուրդի անդամ: Նշանակման յայտարարութիւնը կատարուեցաւ Սաբրամենթի մէջ եւ հրապարակուեցաւ ուղղակի նահանգապետին գրասենեակէն:

Րաֆֆի Գրաճեան փոխ նախագահն է Կլենտէյլ հաստատուած «Գրաճեան» ընկերութեան, որ սննդեղէն կը ներածէ եւ կը վաճառէ: Ընկերութիւնը իր ներածումներուն կարեւոր մէկ մասը կը կատարէ ուղղակի Հայաստանէն: Րաֆֆի Գրաճեան նաեւ Հայ Դատի Յանձնախումբի անդամ է:

Ձեռնարկատիրութեան զարգացման նահանգային խորհուրդը մօտաւորապէս 20 տարի առաջ կեանքի կոչուեցաւ Քալիֆորնիոյ նահանգին մէջ, որպէսզի զարակցի փոքր ձեռնարկութիւններուն: Ներկայիս այս մարմինը փոխատուութիւններով եւ յատկացումներով հարիւրաւոր գործարարներու կ'օժանդակէ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ֆրանսայի պատկերասփիւռի երկրորդ կայանը պատրաստած է վաւերագրական ժապաւէն մը, որ կը ներկայացնէ Հայաստանի մէջ գործող աւետարանական համայնքի «Յոյս Հայաստանի» Միութեան գործունէութիւնը, ինչպէս նաեւ՝ Սուրբ Խաչի տօնը:

«Յոյս Հայաստանի» Միութեան ղեկավար Ռընէ Լեւոնեան յայտնած է, որ միութեան գործունէութիւնը կ'ընդգրկէ ընկերային, կրօնական, կրթական, մշակութային, մարզական եւ առողջապահական մարզերը: Միութիւնը կառուցած է երեխաներու եւ պատանիներու համար ճամբարներ, ուր անոնք, կրօնական գիտելիքներու զուգահեռ, կը սորվին արհեստներ: Միութեան յատուկ ուշադրութեան արժանացած են տարեցնական ու որբերը, որոնց համար միութիւնը կազմակերպած է հիւանդանոցներ, ծերանոցներ, դպրոցներու վերաշինութեան աշխատանքներ:

Ժապաւէնին երկրորդ բաժինին մէջ, խօսուած է Հայաստանի մէջ Ս. Խաչի տօնին մասին, ինչպէս նաեւ ցուցադրուած են Երեւանի մեծագոյն գերեզմանատունը, էջմիածինի եւ այլ վանքերու ու եկեղեցիներու մէջ պահուած հին խաչքարերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Այս գարնան «Լինսի» Հիմնադրամին յատկացուցած 17,5 միլիոն տոլար գումարով սկսած են հանրապետութեան 40 մշակութային վայրերու վերանորոգման աշխատանքները: Մշակութային Օրագրի իրականացման Գրասենեակի տնօրէն Գագիկ Մկրտումեան յայտնած է, որ արդէն իսկ վերանորոգուած են Մարտիրոս Սարգսի տունը - թանգարանը, Երուանդ Քոչարի եւ ժողովրդական արուեստի պետական թանգարանները: Մօտ օրէն կ'աւարտին նաեւ Եղիշէ Զարեհի եւ Սերգէյ Փարաճանով տունը - թանգարաններուն վերանորոգման աշխատանքները:

10 Սեպտեմբերին շինարարական կազմակերպութիւններու միջեւ տեղի պիտի ունենայ մրցում Ջաւուրի մէջ գտնուող Միւսաս Աւետիսեանի տունը - Թանգարանի, Գիւմրի Ասյանգեան քոյրերու եւ Մերկուրովի թանգարաններու, Երեւանի Յակոբ Պարոնեանի անուան երաժշտական քոմպոզիտի պետական թատրոնի վերանորոգման համար: Գրասենեակին տնօրէնը ըսած է, որ աշխատանքները կ'ընթանան ժամանակացոյցին համապատասխան եւ անոնք ընդհանուր առմամբ կ'աւարտին 2003ի վերջերուն:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթեռնի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ԱԿԵԱՐԿ

ՆՊԱՍՏԵՆՔ

Այս անգամ կոչին տէրը Հ. Յ. Գ. Լիբանանի Երիտասարդական Միութիւնն է, որ անցնող քանի մը շաբաթներուն մամուլով եւ «Վաճառյալ»-ի միջոցով լիբանանահայ հասարակական կարծիքը տեղեակ պահեց, թէ ինք ծրագրած է Ախալքալաքի «Ռուբէն Տէր Միւսախան» վարժարանին մէջ կատարել «Եղիկ Գայայեան» գրադարանի բացումը: Առ այդ, միութիւնը գրահաւաքի կոչ ուղղեց լիբանանահայութեան՝ այս նպատակը իրագործելու համար:

Մարգիթը, որուն մասին կը խօսուի այսօր, իրապէս որ ի խորոց սրտի ողջունելի է, որովհետեւ առաջին անգամ ըլլալով Հ. Յ. Գ. Լիբանանի Երիտասարդական Միութիւնը այս տարողութեամբ Ջուախի մը իրագործելու կ'ընդունուի: Եւ այս նպատակը իրականացնելու, որ ոչ միայն հայկական իրականութեան մէջ, այլ նաեւ՝ միջազգային մակարդակի վրայ ընթերցասիրութեան անկում կը տիրէ, սակայն կան ճշմարտութիւններ, զորս չենք անտեսել:

Այդ ճշմարտութիւններէն ամէնէն ցայտունը այն է, որ առանց գիրքի, գրականութեան եւ ընթերցանութեան չկայ ազգային ինքնագիտակցութեան արթնացում. եւ այս ճշմարտութիւնը որքան որ կը յարմարի Ջուախի իրականութեան, նոյնքան կը յարմարի Արցախին, Սփիւռքին եւ այն բոլոր վայրերուն, ուր գոյութիւն ունին ազգային հարցեր:

«Իւրաքանչիւր ընտանիքէ մէկ գիրք Ջուախի Ռուբէն» Տէր Միւսախան վարժարանի գրադարանին, ահապահ այս պէտք է ըլլայ լիբանանահայութեան կարգախօսը, մանաւանդ՝ այս ծրագիրը յաջողանալու աշխատանքին մէջ:

Այս շրջագիծին մէջ իրենց կարեւոր դերակատարութիւնը ունին նաեւ հայութեան կրթական եւ լուսավորութեան հարցերով զբաղող լիբանանահայ բարեսիրական, կնոջական, երիտասարդական եւ մշակութային միութիւնները, ինչպէս նաեւ՝ հրատարակչատունները: Հ. Յ. Գ. Լիբանանի վերոյիշեալ ծրագիրին թիկունք կանգնելու ծիրան մէջ նաեւ անհրաժեշտ է անոնց նպաստը:

Մեր բոլոր միջոցներով նպաստենք «Եղիկ Գայայեան» գրադարանի հիմնումի աշխատանքին: Իւրաքանչիւր գիրք, որ կը մաշի քաւաքի ընթերցողի ձեռքերուն մէջ, լուսադրոյն գրաւականն է վաղուան մեր նորագոյն յաջողութիւններուն:

ԺԱԲ ՅԱԿՈԲԵԱՆ

16 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՄԻԱՆԱՆ

Հայրենի 16 քաղաքական կուսակցութիւններ՝ Հայաստանի Ժողովրդական կուսակցութիւնը, «Հանրապետութիւն»ը, «Ազգային Միաբանութիւն»ը, Հայ Ժողովրդի Համայնավար կուսակցութիւնը, Ազգային Ժողովրդավարական կուսակցութիւնը, Ազգային Ժողովրդավարական Դաշինքը, Սահմանադրական Իրաւունք Միաւորումը, Հայաստանի Սոցիալիստական կուսակցութիւնը եւ «Սոցիալիստական Հայաստան» միաւորումին մէջ ընդգրկուած 7 կուսակցութիւններ 2 Սեպտեմբերին ստորագրած են միացեալ յայտարարութիւն մը՝ քաղաքական միաւորում ստեղծելու նպատակով:

Միացեալ յայտարարութեան մէջ մասնաւորապէս կը նշուի ընտրութիւններու թափանցիկութեան ապահովման եւ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն միասնական թեկնածուով ներկայանալու անհրաժեշտութեան մասին:

Յայտնենք, որ նախապէս կը խօսուէր միաւորումին «Ժողովրդահայրենասիրական Միութիւն» անունը տրուելու մասին, սակայն անուանումի հարցը մինչեւ հիմա տակաւին չէ քննարկուած:

ԶԱՒԱՍԸ ԱՃԱՐՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԱԿԵՑՈՒՄ՝ ՆԻՆՈԾՄԻՆՏԱՅԻ ՄԷՉ

Վերջերս վրաստանի կառավարութիւնը իր յատուկ հիմնադրամներուն միջոցով աճարներուն համար տուններ կը գնէ Նինոծմիւնտայի շրջանի Օրովքա եւ Սփատովքա գիւղերուն մէջ, ուր գլխաւորաբար կ'ապրին հայեր եւ ռուսեր: Տուններ ծախողները գլխաւորաբար ռուս աղանդաւորներ են:

Իւրաքանչիւր տան արժէքը հիմնադրամի ներկայացուցիչները կը գնահատեն միջին հարուստով 300 տոլար: Անոնք պատրաստակամութիւն յայտնած են գնելու նուազագոյնը երեսուն տուն:

www.hamazkayin.com

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԱՇԽԱՏՈՂ ԿԻՆԵՐԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՍԻՒՆԵՐԸ, ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐՈՎԿԱՏԱՐՆԵՐԸ


Մարդկային ընկերութեան որեւէ մարզի մէջ, այսօր, հաւասարապէս իրենց հիմնական դերերը ունին կիններն ու այրերը: Զարգացած երկիրներու մէջ կինները փաստած են, որ իրենք նոյնքան կարեւոր են եւ երկրի մը մէջ անհրաժեշտ ու գործօն քաղաքացի կը նկատուին, որքան՝ այրերը:

Այսօր գրեթէ չկայ միջավայր մը, ուր այրերուն կողքին տիրական եւ ազդու ներկայութիւն չունենայ նաեւ իգական սեռը: Նախապէս կինները միայն չորս պատերու մէջ, ընտանիքին համար աշխատող էակ նկատող աշխարհը եկած է ըսելու, որ առանց կնոջ եւ անոր աշխատանքին կարելի չէ ամբողջական զարգացում եւ յաջողութիւն ապահովել կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ:

Նախնադարեան շրջանին կինը ունէր մէկ հիմնական դերակատարութիւն՝ ըլլալ լաւ տնտեսիկին եւ մայր: Ասկէ բացի, ան ոչ մէկ ձեռով կ'աջակցէր իր ամուսնոյն եւ ներդրում կ'ունենար իր շրջանակին մէջ: Մայրիշխանութեան շրջանին, երբ այրերը յաճախ երկար տան կը բացակայէին տունէն, կինը ստիպուեցաւ դուրս գալ իրեն համար ճշդուած նեղ սահմաններէն, երթալ անտառ՝ որսի եւ հոգալ ընտանիքին սնունդն ու ապրուստը: Այդ ժամանակաշրջանին իսկ կինները փաստեցին, որ իրենք կրնան շարունակել իրենց կեանքը, պահել ընտանիքին կրակը, նոյնիսկ եթէ այրը բացակայ է տունէն:

Սակայն աւելի ուշ, կինը կրկին սկսեւ նկատուիլ մայր եւ այր մարդու կողակից: Իբրեւ էգ՝ ան երբեմն գրկուեցաւ նոյնիսկ իր ամէնէն տարրական մարդկային իրաւունքներէն: Ան նկատուեցաւ միայն գաւակներուն հոգատարութեան կողմէն անձ մը, որ իրաւունք չունի կարծիք յայտնելու եւ որոշում տալու: Հակառակ ասոր, յառաջդէմ կարգ մը երկիրներու մէջ այս կացութիւնը սկսեւ բարելաւուիլ եւ կնոջ նկատմամբ մօտեցումը փոխուեցաւ:

1948ին մարդկային իրաւունք համաշխարհային խորհրդաժողովին մասնակցողները հաստատեցին, որ երկրագունդին վրայ ապրող բոլոր էակները հաւասար ու ազատ ծնած են եւ ամէն մարդ, առանց սեռի խտրութեան, ունի նոյն իրաւունքներն ու ազատութիւնները:



1955ին Լիբանանի մէջ կառավարութեան որոշումով կիններուն տրուեցաւ ընտրելու իրաւունք եւ այրերուն նման որեւէ պաշտօններ ստանձնելու կարելիութիւն:

Այդ թուականէն առաջ արդէն ոչ շատ մեծ թիւով կիններ սկսած էին աշխատիլ տան մէջ կամ անկէ դուրս, որոշ ասպարէզներու մէջ: Սակայն անոնց չէր տրուէր իրաւունքը վարչական բարձր պաշտօններ ստանձնելու: այրեր ընդհանրապէս թերահաւատութեամբ կը մօտենային կիններու կարողութիւններուն: կինները անհրաժեշտ ուսման ալ չէին հետեւեր՝ իրենք զիրենք աւելի եւս փաստելու համար:

Ժամանակի ընթացքին մարդկութիւնը գիտակցեցաւ, թէ կարելի չէ առողջ եւ յառաջդիմած ընկերութիւն մը ունենալ՝ առանց զարգացած կիններու մասնակցութեան, որովհետեւ անոնք կը կազմեն ընկերութեան կէսը եւ կարելի չէ ոտքի կանգնած մնալ... մէկ ոտքով:

Լիբանանի մէջ 1835ին հիմնուեցաւ աղջկանց առաջին վարժարանը, որ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց, սակայն այդ շրջանին չկար աղջիկներուն ուսում տալու անհրաժեշտութեան մտայնութիւնը, եւ այդ իսկ պատճառով քիչ թիւով աղջիկներ սկսան դպրոց յաճախել եւ կանոնաւոր կերպով դասերու հետեւիլ: Ժամանակի ընթացքին, սակայն, այս երեւոյթը չբացաւ եւ գրեթէ բոլոր աղջիկները սկսան գէթ նախակրթարան յաճախել եւ տարրական կրթութիւն ստանալ:

1950ին կատարուած վիճակագրութիւնները ցոյց կու տան, թէ այդ շրջանին արարական աշխարհի ուսած կիններուն թիւն էր շուրջ 1 միլիոն: Իսկ 1975ին անոնց թիւը հասաւ 8 միլիոնի:

Այսօր իրողութիւնը ամբողջովին փոխուած է եւ իգական սեռին ուսման հարցը դարձած է տարրական եւ անվիճելի: Կինները դարձած են ազդու եւ տիրական ներկայութիւն լիբանանեան բոլոր մարզերուն մէջ:

Զարգացած որեւէ երկրի մէջ չկայ կին մը, որ այլեւս կը բաւարարուի տունը մնալով եւ իր ամուսին-



նին ու զաւակներուն համար ճաշ պատրաստելով: Լիբանանի մէջ եւս այս երեւոյթը աչքառու է եւ կիններ այսօր տնտեսական եւ ընկերային զանազան պատճառներով ստիպուած են թէ՛ իրենց տան գործերը կատարել եւ թէ՛ աշխատանքով նիւթապէս իրենց ամուսիններուն նեցուկ կանգնել:

Նորագոյն վիճակագրութիւնները ցոյց տուած են, որ Լիբանանի գրեթէ բոլոր բնագաւառներուն մէջ, նոյնիսկ վարչեր, ուր այդքան ալ հաւանական չէ կիններու գոյութիւնը, իգական սեռը կը բերէ իր իւրաքանչիւր դերակատարութիւնը: Ընտանիքներու կազմութեան եւ պահպանման մէջ, այրերու կողքին, կինները ստանձնած են հաւասար եւ երբեմն՝ յաւելեալ պարտականութիւն: Կինը ունի առօրեայ երկու պարտականութիւն, մինչ այրը՝ մէկ, եւ շատ յաճախ աշխատող կինը կ'աջակցուի, եթէ նոյնիսկ քիչ մը թերանայ իր տան պարտականութիւններուն մէջ: Սակայն ասիկա եւս ժամանակի ընթացքին կը փոխուի, որովհետեւ այսօր կան այրեր, որոնք գիտակցելով աշխատող կիններու դիմազրեւած դժուարութիւններուն՝ իրենք եւս իրենց կարելիութեան սահմաններուն մէջ ներգրուում կ'ունենան տան աշխատանքներուն մէջ եւ օժանդակութեան ձեռք կ'երկարեն իրենց կողակիցներուն:

Կինները ներկայ են քաղաքական, ընկերային, կրթական, մշակութային, գիտական, տնտեսական եւ այլ բնագաւառներու մէջ եւ անոնք շատ յաճախ կրնան աւելի գործօն ըլլալ, քան այրերը:

Լիբանանի մէջ ընդհանրապէս եւ լիբանանահայութեան մօտ յատկապէս՝ իգական սեռի պատկանողները ունին իրենց ուրոյն դիմադիմը: անոնք անպայման կը յաճախեն երկրորդական վարժարան, եթէ անոնց կարելիութիւնները ներքին, կը հետեւին բարձրագոյն կրթութեան: Սակայն բոլորը անկախ անհատներ են եւ ունին իրենց տեսլականներ, յատուկ նկարագիրը եւ իրենց յարգելի տեղը շրջանակին մէջ: Աղջիկներն ու կինները այսօր չեն աշխատիր միայն իրենց ընտանիքներուն օժանդակելու համար, այլ կ'աշխատին իրենց մասնակցութիւնը բերելու ընկերութեան կերտումին եւ յառաջդիմութեան, միաժամանակ փաստելու, որ իրենք ունին յստակ նպատակներ եւ ուղի: Կինները այսօր իրենց գործունէութեամբ փաստած են եւ կը փաստեն, թէ իրենք ատակ են երկու տեսակի՝ ընտանեկան եւ հանրային պարտականութիւններ ստանձնելու: Պէտք չկայ զանազան հաստատութիւններու, վաճառատուններու եւ կեդրոններու մէջ իգական սեռին պատկանող պաշտօններուն թիւը յաճախ շատ աւելի է, քան՝ այրերունը, մասնաւոր՝ վերջին շրջանի երիտասարդութեան արտագաղթի հոսանքէն ետք: Իւրաքանչիւր կին իր դիրքին վրայ կ'ապացուցէ, թէ ինք ատակ է իրեն տրուած պարտականութիւնը լիովին կատարելու: Լիբանանահայ գաղութի կեանքի զանազան բնագաւառներուն մէջ կիններն ու աղջիկները ունին իրենց որոշիչ խօսքը: անոնք տնօրէններ, պատասխանատուներ, ուսուցիչներ, ազգային գործիչներ են մշակութային թէ՛ ընկերային զանազան հաստատութիւններու գործակալներ են: Հայ կինը իր տան պարտականութեան եւ առօրեայ աշխատանքին կողքին գործօն մասնակցութիւն կը բերէ նաեւ միութեան կեանքին:

Աշխատանքը անոնց կու տայ հոգեկան եւ մտային զոհուանակութիւն եւ բաւարարութիւն:

Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ ուսած կամ ընդհանուր զարգացում եւ լայն հորիզոններ ունեցող կիններ աւելի լաւ մայրեր կ'ըլլան եւ աւելի ճիշդ ձեռով կը դաստիարակեն իրենց զաւակները, քան անուսները: Այս իրողութիւնը չափազանց կարեւոր է ապագայի սերունդներու կերտման համար, որովհետեւ նորածինը կը նմանի սպիտակ թուղթի մը, որուն վրայ գրուած իւրաքանչիւր բառի եւ գիծի պատասխանատուն նախ մայրը, ապա հայրը եւ ետքը միջավայրն է: Հետեւաբար կարելի է հաստատել, որ մասնաւոր ներկայիս, երբ աշխարհը շատ արագ ձեւով կը փոխուի եւ մասնակից վրայ ազդող տուեալները բազմազան կը դառնան, մայր մը պէտք է որ ուսած ըլլայ, որպէսզի կարենայ լաւապէս հետեւիլ զաւակին դաստիարակութեան եւ կրթութեան:

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

